Հրապարակում
6 ապրիլի, 2020

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ

ԿԻՐԱՌՈՒՄԸ ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ



Հեղինակ

Լիլիթ Շահինյան
Կրտսեր իրավաբան
+374 98 340400
lilit.shahinyan@dialog.am

ՍԱՀՄԱՆՈՒՄ

Էլեկտրոնային մոնիտորինգը և դրա համար ստեղծված տեխնոլոգիաները դատական և գործադիր մարմիններին հնարավորություն են տալիս սահմանափակել, կարգավորել և իրականացնել կասկածյալի կամ դատապարտյալի տարածական և ժամանակավոր գործունեությունը (դրանց գտնվելու վայրերը, տեղաշարժերը և ժամանակացույցը) հեռավորության վրա՝ հաճախ «իրական ժամանակում»:

Մոնիտորինգի ժամանակակից տեխնոլոգիաները կենտրոնացած են իրավախախտների ճշգրիտ տեղորոշումը ֆիքսելու և դրա խախտման դեպքում իշխանությունների նախազգուշացման վրա[1]:

Կիրառվող մեխանիզմները կարող են տարբերվել, տարբեր են նաև սարքերը: Օրինակները ցուցադրված են երեք լուսանկարներով, որոնք ակտիվ են դեպի սկզբնաղբյուրներ:

A man wearing an ankle monitor. (Zora J Murff for The New York Times)

An ankle monitor is seen on a migrant woman from El Salvador. She was released from federal detention with fellow Central American asylum seekers at a bus depot in McAllen, Texas, on June 12, 2019. | LOREN ELLIOTT/AFP via Getty Images

[1] «Էլեկտրոնային մոնիտորինգի ստանդարտներ և էթիկա: Պատասխանատու մասնագետների համար ուղեցույց՝ ինչպես ստեղծել և օգտագործել էլեկտրոնային մոնիտորինգը», Եվրոպայի Խորհուրդ, 2015 : https://rm.coe.int/handbook-standards-ethics-in-electronic-monitoring-eng/16806ab9b0

ԻՆՉՊԵ՞Ս Է ԱՇԽԱՏՈՒՄ ՀԱՄԱԿԱՐԳԸ՝



Գրաֆիկով ցույց է տրվում, թե այդ երկրներում ընդհանուր բանտարկված անձանց քանի տոկոսն է մինչդատական կալանքի տակ գտնվում տարբեր երկրներում (աղբյուրը՝ https://prisonstudies.org/sites/default/files/resources/downloads/pre-trial_detention_final.pdf):

Figure 1: The proportion of pre-trial detainees as a percentage of the total prison population*



*Most recent figures available on World Prison Brief as of September 2019. Figures vary by jurisdiction as to the

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ

Շվեյցարիայում 2015թ-ին կատարված օրենսդրական փոփոխություններից հետո՝ 2018 թվականից, գործող քրեական օրենսդրությունը էլեկտրոնային մոնիտորինգը սահմանում է որպես այլընտրանք՝ մինչև մեկ տարի բանտարկությանը կամ երկարատև պատժի վերջին փուլի համար: Էլեկտրոնային շղթաները 2022թ-ից նաև օգտագործվելու են ընտանեկան բռնության ոլորտում պայքարի համար, երբ հնարավոր կլինի սահմանել այն գոտին, որտեղ զոհն է գտնվում և արգելել հանցագործի մուտքը այդ գոտի: (Շվեյցարիայում գործող համակարգի մասին մանրամասն հետևյալ հղումով՝ https://www.swissinfo.ch/eng/geosatis-_swiss-made-ankle-bracelets-ride-global-prison-reform-trend/45333054)

Ղազախստանում 2015թ-ից հնարավոր է կիրառել էլեկտրոնային սարքերի միջոցով վերահսկման մեխանիզմներ երեք կատեգորիայի անձանց համար՝ ազատազրկված անձանց, պայմանական վաղաժամ ազատ արձակված անձանց և անձանց, ում նկատմամբ պայմանական պատիժը չի կիրառվել: Այդ միջոցները ավելի լայն ծրագրի՝ պրոբացիոն քրեական արդարադատության մաս են կազմել, որոնց կիրառումը արդարացված էր նաև մեկ բանտարկյալի վրա ծախսվող պետական միջոցների տեսանկյունից (Ղազախստանում գործող համակարգի մասին մանրամասն հետևյալ հղումով՝ https://astanatimes.com/2015/01/kazakhstan-increases-use-electronic-bracelet-monitoring-rather-prison/):

Ռուսաստանի Դաշնային քրեակատարողական ծառայության գործակալություններում էլեկտրոնային մոնիտորինգը սկսել է կիրառվել 2009–2012 թթ-ին: Էլեկտրոնային ապարանջանների առաջին փորձնական օգտագործումն իրականացվել է Եվրամիության ֆինանսական աջակցությամբ 2009թ-ին Վորոնեժի շրջանում: 2019թ-ի դրությամբ այդ միջոցներն օգտագործվում են Ռուսաստանի Դաշնային քրեակատարողական ծառայության բոլոր տարածքային գործակալություններում և հաստատություններում: Դրանք կիրառվում են Փոքր և միջին ծանրության հանցագործությունների համար դատապարտված քաղաքացիների նկատմամբ՝ որպես պատժի հիմնական տեսակ ՝ 2 ամսից մինչև 4 տարի ժամկետով դատապարտվելու

դեպքում, ինչպես նաև այն անձանց դեպքում, որոնց համար դատարանն ընտրել է խափանման միջոց՝ տնային կալանքի տեսքով: Նրանք կարող են կրել էլեկտրոնային ապարանջան: 2018թ-ի սկզբի տվյալներով ՝ 14.835 մարդ էլեկտրոնային մոնիտորինգի է ենթարկվել ՌԴ-ում (ՌԴ-ում գործող համակարգի մասին մանրամասն հետևյալ հղումով՝ http://elar.urfu.ru/bitstream/10995/72056/1/978-5-91256-441-3_2019_080.pdf):

Լիտվայում Էլեկտրոնային մոնիտորինգը մեկնարկել է 2012թ-ին: Մինչև 2016թ-ը էլեկտրոնային մոնիտորինգն իրականացվում էր միայն ռադիոհաճախականության սարքերի օգտագործման միջոցով: Հետագայում օգտագործվել են GPS սարքեր: 2016թ-ի հոկտեմբերի 12-ին ստեղծվեց Էլեկտրոնային մոնիտորինգի կենտրոն, որի առաքելությունը էլեկտրոնային մոնիտորինգի 24/7 վերահսկողությունն էր: Էլեկտրոնային մոնիտորինգը կիրառվում է երկու հիմնական ուղղությամբ՝ որպես պայմանական ազատման ձև բանտից՝ ինտենսիվ հսկողություն, և որպես դատարանի կողմից պարտականությունների կատարումը վերահսկող գործիք (Լիտվիայում գործող համակարգի մասին մանրամասն հետևյալ հղումով՝ http://www.kaldep.lt/en/prison-department/implementation-of-2009-xq88.html):

Լատվիայում 2015թ-ի հուլիսից էլեկտրոնային շղթաների կիրառությունը թույլատրվեց օրենքով (Լատվիայում գործող համակարգի մասին մանրամասն հետևյալ հղումով՝ https://www.vpd.gov.lv/latvija1jlijievieelektroniskouzraudzbu?lang=EN):

ԱՄՆ-ի բոլոր հիսուն նահանգներում դրանք երբեմն օգտագործվում են որպես բանտային ծանրաբեռնվածության կրճատման մեխանիզմ: Էլեկտրոնային մոնիտորինգը օգտագործվում է նաև անչափահասների, դատական գործընթացին սպասող ներգաղթյալների, թմրամիջոցների վերականգնման ծրագրերի մեծահասակների կամ ընտանեկան բռնության մեջ մեղադրվող անձանց հետևելու համար: Ավելի քան մեկ տասնամյակում էլեկտրոնային մոնիտորինգը 140% աճ է գրանցել: Էլեկտրոնային մոնիտորինգի առավելագույն օգտագործմամբ նահանգներ են համարվում Ֆլորիդան, Տեխասը, Կալիֆորնիան, Մասաչուսեթսը և Միչիգանը: Համակարգը կիրառվում է նախնական դատավարության ընթացքում, որպես պատժին այլընտրանք, պայմանական պատժից ազատված անձանց համար, անչափահասների նկատմամբ, միգրանտներ նկատմամբ: (Որոշակի թվային տվյալների համար՝ https://www.eff.org/document/em-stats):

Շոտլանդիայում առաջին պիլոտային ծրագիրն իրականացվել է դեռևս 1998թ-ից: Այսօր կիրառվում է 16-ից բարձր անձանց նկատմամբ՝ որպես մի քանի դատական որոշումների կատարման վերահսկողության միջոց, օրինակ՝ որոշում որոշակի

իրավունքների սահմանափակման վերաբերյալ, տնային կալանք, թմրամիջոցներից կախվածության հաղթահարման գործընթացի նկատմամբ հսկողություն և այլն: Էլեկտրոնային միջոցի կիրառումը կարող է տարբերվել թե ժամանակային առումով, թե նպատակի. անձանց կարող է արգելվել որևէ տարածքում լինել կամ դուրս գալ որոշակի տարածքից (Շոտլանդիայում գործող համակարգի մասին մանրամասն հետևյալ հղումով՝ https://www.iriss.org.uk/resources/insights/electronic-monitoring-criminal-justice-system):

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

Եվրոպայի խորհրդի մակարդակով 2014թ-ի փետրվարի 19-ին ընդունվել է CM/Rec(2014)4 առաջարկը՝ անդամ պետություններում էլեկտրոնային մոնիտորինգի կիրառման վերաբերյալ:

Ստորև ներկայացված է եվրոպական մի շարք երկրների վերաբերյալ համեմատական աղյուսակը՝ հրապարակված 2018թ-ին: Ի թիվս այլոց՝ երևում են երկրներ, որտեղ կիրառվում է էլեկտրոնային մոնիտորինգը ինչպես մինչդատական փուլում, այնպես էլ որպես պատժին այլընտրանք:

	Indicators of classical form of punishment				Pre-trial detention or forms of probation/supervision before the sentence				Forms of probation/supervision after the sentence			
European countries	Number of persons held in prison in 2014	Exploitation of prison capacity	Mortality rate per 10,000 inmates (2014)	Average daily expense per inmate (in €) (2014)	Alternatives to pre-trial detention with supervision by probation agencies	Custodial suspension of criminal proceedings	EM	Home Arrest	Fully suspended custodial sentence with probation	Partially suspended custodial sentence with probation	EM	Home Arrest
Austria	8 692	100,3%	23,70	112,97 €	203	4,078			4,587	1,279	277	
Belgium	NA	NA	23,90	137,28 €	2,556		62		13,508		1,674	
Bulgaria	7 870	100,0%	36,80	13,68 €							183	
Croatia	3 763	93,6%	42,50	7,29 €	0	15	0	0	274		0	0
Cyprus	532	N/A	44,10	75,00 €	192						NA	NA
Czech Republic	18 658	93,2%	15,50	45,00 €	836	131			11,552		0	176
Denmark	3 583	N/A	11,20	191,00 €					1,611	273	301	
Estonia	3 034	102,4%	27,00	39,36 €	9		9		2,613	295	0	
Finland	3 148	N/A	29,10	175,00 €							51	
France	66 270	114,6%	17,00	102,67 €	3,619	1,644		234	123,803		9,429	NA
Germany	63 228	N/A	23,10	129,35 €							26	
Greece	11 798	119,3%	24,20	28,16 €	4,430	715	2	2	2,947		0	22
Hungary	17 890	139,0%	36,70	26,57 €		3,836			6,138		NA	
Ireland	3 777	91,1%	20,90	189,00 €					1,055	884		
Italy	54 745	108,5%	17,00	141,76 €		6,557			6,165		NA	9,491
Latvia	4 745	81,1%	58,20	22,58 €					2,927		27	
Lithuania	8 636	91,9%	47,90	16,05 €				1113	2,845		70	2,939
Luxembourg	626	44,0%	15,20	206,52 €	18				349		24	
Malta	581	93,4%	NA	NA					114		NA	NA
Netherlands	11 934	81,4%	25,40	273,00 €			1,402				NA	NA
Poland	78 358	88,3%	NA	NA								
Portugal	14 198	111,0%	52,10	41,22 €	874	6,599	299	348	13,574		187	81
Romania	30 156	104,3%	38,60	19,79 €					30,575			
Slovakia	10 020	84,7%	17,70	39,39 €	278				129		15	9
Slovenia	1 522	112,7%	39,40	60,00 €								3
Spain	65 017	N/A	23,80	59,72 €					11,256	1	1,829	NA
Sweden	5 702	88,1%	27,30	354,00 €			3,087		42,225		786	
UK:England and Wales	83 678	93,3%	28,40	115,75 €			5,917				5,825	
UK: Northern Ireland	7 731	N/A	5,40	112,20 €								
UK: Scotland	1 709	89,3%	30,50	125,00 €							600	